ՀՐԱՆՏ ԲԱՏԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(1909—1983)

Հոկտեմբերյան այս օրերին Հայաստանի գիտական հասարակությունը նշում է անվանի կենսաբան-գենետիկ, մանկավարժ, գիտության վաստակավոր գործիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Գևորգի Բատիկյանի ծննդյան 80-և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակը։

Հրանտ Գևորգի Բատիկյանը կյանքից հեռացավ 1983 թվականին, սոցիոգործունեության ոլորտի ծաղկման շրջանում, երբ գեռևս շատ պլաններ և անելիքներ ուներ Հայաստանում կենսաբանական գիտության զարգացման բնագավառում։

Ծնվել է 1909 թ. Բաքվում, ուսուցչի ընտանիքում։ Վաղ է սկսվել նրա հասարակական-գիտական գործունեությունը։ 1924—26 թ.թ. նա Նոր-Բայազետի (Կամո) պիոներների գավառային բյուրոյի նախագահն էր, 1926—1930 թ.թ. Երևանի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ուսանող։ 1930 թ. Հրանտ Բատիկյանը գործուղվում է Լենինգրադ՝ բուսաբուծության համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրայում սովորելու։ Խորհրդային ականավոր գիտնականներ Ն. Ի. Վավիլովի և Գ. Դ. Կարպեչենկոյի ղեկավարությամբ նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա։ 1933—1939 թ.թ. աշխատում է նույն ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող, իսկ 1936 թ. համատեղության կարգով աշխատում է նաև ԳԱ Հայկական մասնաճյուղում որպես Կենսաբանության ինստիտուտի փոխտնօրեն։ 1937—1940 թ.թ. Հ. Բատիկյանը ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գլխավոր գիտական քարտուղարն էր, իսկ 1940—1941 թ.թ.՝ մասնաճյուղի նախագահության նախագահի տեղակալը։ Հայրենական պատերազմի առաջին տարիներին զբաղեցնում է խորհրդային բանակ, որտեղ մինչև 1943 թ. ծառայում է որպես քաղաշինարար։ 1943—1957 թվականներին նա ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի գենետիկայի ինստիտուտի բույսերի հիդրիդացման բաժնի վարիչն էր։

Հ. Բատիկյանի տաղանդը հատկապես վառ արտահայտվեց մանկավարժության բնագավառում։ 1950 թվականին նա պաշտպանում է դոկտորական դիսերտացիա և մեկ տարի անց ստանում պրոֆեսորի կոչում։ Պրոֆեսոր Հ. Բատիկյանը Երևանի պետական համալսարանի գենետիկայի և դարվինիզմի ամբիոնի հիմնադիրներից էր և ավելի քան երեսուն տարի ղեկավարում էր այդ ամբիոնը։

Այնուհետև նշանավոր գիտական-մանկավարժական մենք տեսնում ենք Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի դեկան, ապա համալսարանի ռեկտորի պաշտոնում։ Այդ տարիներին դրսևորվեցին Բատիկյան գիտական-մանկավարժի կազմակերպչական մեծ ընդունակությունները։ Այդ տարիներին այդաստվեց և ամրապնդվեց համալսարանի ուսումնական մասնաշնորհների շինարարությունը։ Նրա անմիջական ջանքերով կենսաբանական ֆակուլտետում առաջացան նոր ամբիոններ և գիտահետազոտական լաբորատորիաներ։ Անսահման էր Հ. Բատիկյանի եռանդը և աշխատունակությունը, որը հաճախ զարմանք էր պատճառում նրա բազմաթիվ գործընկերներին և աշակերտներին։ Նրա ընդհանուր կորիզին են պատկանում ավելի քան 150 գիտական աշխատություններ, 2 մենագրություն, ուսումնական ձեռնարկ, 18 գիտահանրամատչելի բրոշյուրներ։ Նրա կողմից պատրաստվել է գիտության, բարձրագույն կրթության տարբեր բնագավառներում աշխատող 35 գենետիկայի, դարվինիզմի, բջջաբանության, սաղմնաբանության և սելեկցիայի գծով ավելի քան 40 թեկնածուներ և դոկտորներ։

Հաշվի առնելով նրա ավանդը կենսաբանական գիտությունների զարգացման բնագավառում 1961 թվականին նրան շնորհվում է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Դեռևս Լենինգրադում սովորելու և աշխատելու տարիներին Հ. Բատիկյանը անցնում է գենետիկական գիտության և բջջաբանության գրեթե մեծ դպրոց համաշխարհային ճանաչում և փառք վաստակած գիտնականների՝ Ն. Ի. Վավիլովի, Գ. Դ. Կարպեչենկոյի, Ն. Ա. Լևիտսկու մոտ։ Նրա վաղ աշխատանքները՝ նվիրված փորձարարական մուտագենեզին արժանանում են համաշխարհային գիտական հասարակության ուշադրությունը։ Իր բեղմնավոր կյանքի տարիներին նա զբաղվել է բույսերի գենետիկայի, բջջաբանության, սաղմնաբանության և սելեկցիայի հարցերով։ Կյանքի վերջին տարիներին Հ. Բատիկյանին առանձնապես հետաքրքրում էին մարդու տեխնոգեն գործունեության հետևանքով կենսոլորտի փոփոխությունների հարցերը, մեծ ուշադրություն դարձնելով մարդու առողջական վիճակին և նրանց մոտ ժառանգական հիվանդությունների առաջացմանը։

Գիտական և մանկավարժական գործունեությանը զուգընթաց պրոֆեսոր Բատիկյանը զբաղվում էր հասարակական ակտիվ գործունեությամբ։ Նա համամիութենական և հանրապե-

ական մի շարք պրոբլեմային խորհուրդների անդամ էր, ՀԽՍՀ ԳԱ «Լենինարանական հանձնախմբի գիտական խորհրդի (1953–1975 թթ.), Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրության անդամ, Ն. Ի. Վավիլովի անվան գենետիկների և սելեկցիոներների համամիութենական ընկերության վարչության անդամ և հայկական բուժանմուների պրեզիդենտ, մի շարք գիտական, գիտա-մեթոդական և կոորդինացնող համամիութենական խորհուրդների անդամ։

Այսօր, երբ Հայաստանի գիտական հասարակությունը նշում է Հրանտ Գևորգի Բաբիկյանի ծննդյան 80 և աշխատանքային գործունեության 50 տարին, նա մեզ հետ չէ։ 74 տարի գոնեն չբավարար կյանքից հեռացավ բազմատաղանդ գիտնականը, որը գեռևս շատ պլաններ և գիտական մտահղացումներ ունի իրագործելու։ Յուրաքանչյուր մարդ, որն աշխատել է նրա հետ նամ գոնե մեկ անգամ հանդիպել է նրան, ձգտել չի կարող մոռանալ հայ ժողովրդի արժանավոր զավակի մեծ բազմազգ և, բառիս բուն իմաստով, լավ մարդու պատկառելի հիշատակը։

Բ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ